352
Հ-14
Ալ.
MAR 2010
1007
325741

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԱԴՐԿԵՆՏ ԳՈՐԾԿՈՄԻՆ ԿԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՆԿՈՒՐՍԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԻՍՏՈՒՄ.

*26 մայիս 1934 թ.*

# 1934—35 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՆԿՈՒՐՍ-ՄՐՑՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1934–35 *ուսումնական տարվան նախապատրաստվող լավագույն գյուղխորհուրդների համամիութենական մրցությունը տեղի յե ունենալու հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին: Մրցությունը խնդիր ե դնում իրացնելու Համկոմկուսի (բ)* 17–*րդ համագումարի վորոշումը՝ կուլտուրական շինարարության մասին և Համկոմկուսի (բ) վորոշումը՝ դպրոցի մասին:* 1934–35 *ուսումնական տարում ամբողջ հանրապետության մեջ պետք ե ավարտվի ընդհանուր պարտադիր տարրական ուսումը և հետևյալ քայլն արվի միջին դպրոցի ծավալով ընդհանուր ուսումն իրագործելու պայմաններ նախապատրաստելու համար:*

*Մրցության խնդիրներն են վոչ միայն ձեռք բերել քանակական ցուցանիշներ, այլև բարձրացնել դպրոցի աշխատանքի վորակը: Դպրոցը պետք ե պատրաստի գրագետ մարդիկ, վորոնք կարողանան տիրա*

39 794

պետել կոնկրետ գիտությունների: Դպրոցը պետք է լինի 29 MAY 2013 կոմունիստական դաստիարակման իսկական օջախը, ընդունակ վերջնականապես կոմունիզմ հաստատելու:

Ժողովրդական կրթության վերաբերմամբ միջոցառումների սիստեմում դպրոցը պետք է դրվի խորհուրդների ուշադրության կենտրոնում: Մրցության խնդիրն է՝ բարձրացնել մեր դպրոցը բարձր աստիճանի վրա, որինակելի կերպով նախապատրաստել նրան նոր ուսումնական տարվան: Այդ կարելի յե անել միայն լայն պրոլետարական հասարակայնության կողմից ուշադրության և կոնկրետ օգնության պայմաններում:

Մրցության անցկացնելու մեջ գյուղխորհրդի աշխատանքի մեթոդները հանդիսանում են լայն մասսայական — բացատրական աշխատանքը, գործնական ներգրավում—սոցիալ - կուլտուրական սեկցիայի և պատգամավորների խմբակի միջոցով — աշխատավորության և դպրոցին աջակցող հանձնաժողովներին, նոր ուսումնական տարվան համար դպրոցը լավագույն կերպով նախապատրաստելու համար:

Գյուղխորհուրդը գործնական ինչ պիտի անի, վորպեսզի դպրոցները լրիվին նախապատրաստի նոր ուսումնական տարվա համար և հաղթանակող լինի գյուղխորհուրդների համամիութենական մրցությունում:

## 1. ԴՊՐՈՑՈՎ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ԸՆԴԳՐԿԵԼ 8–11 ՏԱՐԵԿԱՆ ԲՈԼՈՐ ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ

Դրա համար —

ա) Կազմել 8–11 տարեկան բոլոր յերեխաների ցուցակը և նրանց ուղարկել մոտակա դպրոցը. միջոց



ներ ձեռք առնել նրա համար, վորպեսզի 1933–34 ուսումնական տարում դպրոցից հեռացած բոլոր յերեխաները 1934–35 ուսումնական տարվա սկզբում վերադառնան դպրոց:

բ) Աղջիկներին 100 տոկոսով ներգրավել դպրոց:

գ) Ապահովել տարրական դպրոց ավարտած բոլոր յերեխաների հինգերորդ դասարանում ընդունելը:

դ) Համալրման ժամանակ ձեռք բերել, կառավարության կողմից սահմանված խմբակների խտությունը: Այնտեղ, վորտեղ յերեխաների թիվն աննշան է, նրանց ուղարկել մոտակա դպրոցը՝ վերջինների կից կազմակերպել ինտերնատ կամ քիչ ազգաբնակություն ունեցող կետից յերեխաներին դպրոց փոխադրել:

յե) Ազգաբնակությանը լայն կերպով բացատրել ընդհանուր ուսման պարտադիր լինելը, վճռական պայքար մղելով դասակարգային թշնամու դեմ, վորը խոչընդոտ է հանդիսանում ընդհանուր ուսում անցկացնելուն և փորձում է խանգարել այն:

## 2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱԱՆ ՏԱՐՎԱ ՍԿԶԲԻՆ ԱՎԱՐՏԵԼ ԲՈԼՈՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄՆ ՈՒ ՆՈՐՈԳՈՒՄԸ

Դրա համար —

ա) Կազմակերպել ազգաբնակության աշխատանքային մասնակցությունը կառուցմանը օգնելու համար (տեղական շինանյութերի պատրաստում, նրանց շենքի մոտ բերելը, բարեկարգության աշխատանքները և այլն):

բ) Անմիջապես ստուգում կատարել դպրոցական շենքերի դրության, յերևան բերել անհրաժեշտ նորո

գումները և ավարտել այն վոչ ուշ ոգոստոսի 15-ից, դրա համար ոգտագործելով տեղական բյուջեյով դրան հատկացված գումարը, և դպրոցների նորոգման գործում կոլխոզնիկների, աշխատավոր մենատնտեսների կազմակերպված մասնակցությունը:

գ) Ամեն կերպ բարելավել կառուցման վրա գտնվող բանվորների և տեխնիկական անձնակազմի նյութական — կենցաղային պայմանները (տրամադրել բնակարան, տրանսպորտ ծառայության կարիքների համար, սնունդով ապահովել և այլն):

դ) Ամենօրյա վերահսկողության համար—ամեն մի նոր կառուցվող դպրոցին ամրացնել սոցիալ — կուլտուրական սեկցիայի լավագույն անդամներին:

## 3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍԿԶԲԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՇԵՆՔԵՐ ՅԵՎ ԱԶԱՏԵԼ ԴՊՐՈՑՆԵՐԸ ԿՈՂՄՆԱԿԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՑ

Դրա համար —

ա) Ստուգել դպրոցի համար հատկացված շենքերի դրությունը, անպետք շենքերը փոխարինել նորերով՝ հարմարեցնելով այն դպրոցների համար․

բ) Ստուգել, թե վոր դպրոցներում շենքերը ոգտագործվում են վոչ ուղղակի ըստ իր նշանակության (կողմնակի բնակիչներ, վորոնք վոչ մի առնչություն չունեն դպրոցի հետ, զանազան հիմնարկներ, պահեստներ և այլն) և, համաձայն կառավարության վորոշման, ազատել բոլոր դպրոցները այդ անձնավորություններից ու հիմնարկություններից, ամբողջ ազատ տարածությունը տրամադրելով դպրոցներին:



## 4. ԲՈԼՈՐ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՈՐԻՆԱԿԵԼԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳ ԴՐՈՒԹԱՅՆ ՄԵՋ ԴՆԵԼ

Դրա համար —

ա) Ստուգել դպրոցական շենքերի դրությունը և մինչև ոգոստոսի 15-ը նրանց որինակելի սանիտարական բարեկարգ դրության մեջ դնել:

Ընդ սմին, հատուկ ուշադրություն դարձնել շենքի մաքրության վրա, կարգի բերել արտաքնոցները, առանձնացնել տղաների ու աղջիկների արտաքնոցները, հոգ տանել դպրոցների բակերի կարգի բերելու համար և միջոցներ ձեռք առնել բակերի կանաչազարդելու համար:

## 5. ՄԻՆՉԵՎ ՀՈՒՆԻՍԻ 15-Ը ԲՈԼՈՐ ԴՊՐՈՑՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԵԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՄԲՈՂՋ ՏԱՐՎԱ ՎԱՌԵԼԻՔԻ ՊԱՇԱՐՈՎ

Դրա համար —

ա) Լիովին ոգտագործել միջոցները վառելիքի մթերելու համար․ ներգրավել դպրոցներին աջակցող հանձնաժողովները, կոլտնտեսականներին, աշխատավոր մենատնտեսներին վառելիքի մթերման գործում (փայտ, աթար և այլն):

բ) Դպրոցների և ուսուցիչների համար վառելիքը վոչ միայն պատրաստել, այլ և տեղափոխել այն դպրոց, ապահովելով նրա անվնասությունը:

## 6. ՄԻՆՉԵՎ ՈԳՈՍՏՈՍԻ 15-Ը ԴՊՐՈՑՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԵԼ ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՎ

Դրա համար —

ա) Հետազոտել ամեն մի դպրոց, յերևան բերել թե ինչ քանակությամբ ինվենտար (նստարաններ,

գրատախտակներ, սեղաններ և այլն) է պակասում. միջոցներ ձեռք առնել պակասող սարքավորումները լրացնելու համար. կազմակերպել ռայոնական լուսբաժնից նոր բաց թողվող կարասիքների դպրոց տեղափոխելու գործը:

բ) Մինչև հունիսի 15-ը ինվենտարացում (գրանցում) կատարել դպրոցական ունեցվածքի. մինչև ոգոստոսի 15-ը նորոգել դասարանական կահկարասիքը, այդ գործի մեջ ներգրավելով՝ կամավոր ընկերբունքով՝ աշակերտների ծնողների թվից — վարպետներին. ապահովել ամառային արձակուրդի ժամանակ դպրոցական ինվենտարի պահպանումը:

## 7. ՄԻՆՉԵՎ ՈԳՈՍՏՈՍԻ 15-Ը ԲՈԼՈՐ ԴՊՐՈՑՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԵԼ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՎ ՈՒ ԴԱՍԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐՈՎ

Դրա համար —

ա) Միջոցներ բաց թողնել, դասագրքերի և դասական պիտույքների համար հատկացված գումարից, միջոցներ ձեռք առնել ռայլուսբաժնի միջոցով նրանց պատրաստելու համար. աջակցել դպրոցի վարիչին, համաձայն Լուսժողկոմատի հրահանգի կազմակերպել ծնողներից դրամ հավաքելու գործը դասագրքերի գնելու համար, հետևել, որպեսզի դպրոցի վարիչը մինչև հունիսի 15-ը ռայլուսբաժնին պահանջագիր ներկայացնի՝ 1934–35 ուսումնական տարվա դասագրքերի ու դասական պիտույքների համար:

բ) Ամեն մի դպրոցի ամրացնել սոցիալ-կուլտուրական սեկցիայի անդամի և նրա միջոցով հետևել, որպեսզի ուսումնական տարվա ավարտելուց հետո բոլոր դասագրքերը վերադարձվեն դպրոցին և գրանցվեն ինվենտարային գրքում. կազմակերպել դասագրքերի խնամքով պահպանումը:



գ) Հետևել, որպեսզի ուսումնական տարվա սկզբին պատրաստված լինեն անհրաժեշտ դասական պիտույքները (տետրեր, թանաքամաններ, գրչակոթեր, գրչածայրեր, մատիտներ, կավիճ և այլն):

## 8. ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՆՈՒՆԴՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍԿԶԲԻՆ

Դրա համար —

ա) Աջակցել դպրոցներին՝ իր ժամանակին ժողովել դպրոցին պատկանող հողամասերից բերքը՝ ճշգրիտ հաշիվ առնել այն և ապահովել նրա ամբողջությունն ու անվնասությունը. դպրոցին աջակցող հանձնաժողովի միջոցով կազմակերպել՝ կամավոր հիմունքներով՝ աշակերտների սնունդի համար կոլտնտեսական և մենատնտես աշխատավոր ծնողներից սննդի մթերքներ ժողովելու գործը:

բ) Դպրոցներին կից շենքեր հարմարեցնել աշակերտների նախաճաշելու համար և մատակարարել նրանց անհրաժեշտ ինվենտար (սեղաններ, նստարաններ, ամանեղեն). յեթե սնունդը դպրոցում տալու հարմարություններ չկան, աշխատել յերեխաներին ամրացնել միացյալ կոոպերատիվային սննդի ճաշարանին կամ կոլտնտեսության ճաշարանին:

գ) Բոլոր դպրոցներին հատկացնել հողամասեր և մատակարարել՝ սերմ աշնանացանի համար, ձագեր (ճագար, թռչուն և այլն). իր ժամանակին պահանջ դնել ռայգործկոմների առաջ՝ գյուղատնտեսական ինվենտարի համար և աշխատել այն ստանալու համար:

## 9. ԲԱՐԵԼԱՎԵԼ ՈՒՍՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

Դրա համար —

ա) Ապահովել ուսուցիչներին բնակարաններով՝ ըստուգել թե ինչպես է գնում նրանց մթերքներով, ար

39.794

դյունաբերական ապրանքներով մ[...] օգնել նրանց այդ գործում, օգնել [...]րանց անհատական բանջարանոցների մշակելուն, ընտանի թռչուններ և այլն ձեռք բերելուն:

բ) Լիովին վերացնել ուսուցիչների աշխատավարձի պարտքերը, վճարել նրանց արձակուրդի աշխատավարձը հուլիսի 1-ից վոչ ուշ:

---

Այս ցուցանիշներով չեն սպառվում գյուղխորհրդի բոլոր հնարավորությունները նոր ուսումնական տարվա համար դպրոցների լավ նախապատրաստման գործում: Դրանք հանդիսանում են **հիմնականը**՝ առանց վորոնց իրագործման դպրոցը չի կարելի նոր ուսումնական տարվա համար նախապատրաստված համարել: Հանդիպական պլանների կարգով, սոցմրցության և հարվածայնության հիմունքով՝ ներգրավելով կոլտնտեսականների ու աշխատավոր մենատնտեսների լայն մասսաները, խորհուրդները և նրանց սոցիալ - կուլտուրական սեկցիաները կարող են, և պետք է հայտնաբերեն նախաձեռնություն և գերակատարեն առաջադրությունը:

Իր ժամանակին և լավ իրացնելով այս արտադրական ցուցանիշները, խորհուրդները հենց դրանով իրենց պարտքն են կատարում պրոլետարական պետության առաջ և արժանի կլինեն առաջին տեղը գրավելու՝ 1934–35 ուսումնական տարվա համար գյուղխորհուրդների կողմից դպրոցները լավ նախապատրաստելու համամիութենական մրցության մեջ:

352
2-14



ՀՀ Ազգային գրադարան
NL0215504